ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

18.12.2018թ. N 02/16.4/6257-18

<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Տարոն ՎԻՐԱԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վիրաբյան

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Կոմիտե) և <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2018 թվականի մայիսի 18-ին կնքվել է ՀՀ Արարատի մարզի գ. Արևաբույրի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը, Պայմանագրի 2.1.3 կետը, ինչպես նաև <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի դեկտեմբերի 5-ի գրությունը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 2018 թվականի դեկտեմբերի 19-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 2 440 000 (երկու միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 2018 թվականի դեկտեմբերի 18-ին կտեղադրվի gnumner.am կայքում:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ /ԳԼԽ. ՔԱՐՏՈՒՂԱՐ/

Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727